ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

«08» նոյեմբեր 2017թ. N 127
Ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԹԻՎ 1 ԴՊՐՈՑԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2017թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների շրջանակներում հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» 09-06-01-12 ծրագիրը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հատկացված գումարի շրջանակներում սահմանել ներքոհիշյալ ուղերթը՝

1/ Ձախափ - Կեչուտ -Ձախափ - Կեչուտ -Ձախափ

.

2. Վերոհիշյալ ուղերթով մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը իրականացնելու համար 2017թ. պետական բյուջեով նշված ծրագրով Քարագլխի միջն. դպրոցին հատկացված գումարից Քարագլուխ - Սալլի - Քարագլուխ - Սալլի երթուղին դադարեցնելու պատճառով առաջացած տնտեսված միջոցներից 256 հազ. դրամ գումար հատկացնել Ջերմուկի թիվ 3 միջն. դպրոցին:
3. Հանձնարարել վերոհիշյալ դպրոցի տնօրենին կնքելու գնման համապատասխան պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:
4. Սույն կարգադրության պահանջները տարածվում են 2017թ. նոյեմբերի 9-ից ծագած հարաբերությունների վրա:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ